



14. ԹԱՔԱՎՈՐԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԵՔ ՏՂԵՐԸ

Կըլնի շիլնի մի թաքավոր. սա էնքան հարուստ էր, որ աշխարհի երեսին ինչքան թաքավոր կար, մենակ նրա շափ հարստութիւն չէին ունենա: Սա իրեք տղա ունեւր, որոնք դեռ փոքր էին: Կամաց-կամաց, սորա հարստութիւնը հատավ ու ինքն էլ խելքից ընկավ՝ ցնորվեց: Այսպես պատահեց և նրա կնոջ հետ: Թաքավորը երկար ժամանակ շերեաց իր ժողովրդին. դրանք զարմանում էին, թե ինչու չի երևում, կարծելով, թե տկար է: Ներս մտան տուն, տեսան, որ ոչ ոք չկա տանը, բայց մեջը դափ ու զուռնա են ածում. այն ժամանակ գլխի ընկան, թե բանն ընչումն է: Դեռ ներս էր մտել՝ նրա տանը բնակվել, նրա ունեցած-չունեցածը հավաքել տարել և մինչև անգամ թաքավորին խելքից հանել: Մի քանի ժամանակից հետո նաև թաքավորի կնոջը փախցրեց տարավ: Թաքավորը տրտում-տխուր անց էր կացնում իր օրերը ամենավերջին աղքատութիւն մեջ: Նրա երեք որդիքը այնքան փոքր էին, որ չէին կարողանում հասկանալ տրտմութիւն պատճառը: Մի անգամ այս երեք եղբայրը գնացին ման գալու: Միջնեկ եղբայրը տեսավ մի հարս՝ կուժը ուսին շրից գալիս է. քարը շարտեց ու կոտրեց նրա կուժը:

Հարսը բարկացավ նրա վրա ու ասաց.

— Փոխանակ իմ կուժը կոտրելու, ինչո՞ւ չեք ձեր հորն ու մոր վրա մտածում, որոնց հարստութիւնը դէր տարավ, իրանք գժվեցին, այս ըոպեին էլ ձեր մայրը նրա մոտ է:

Այս խոսքերը ներգործութիւն ունեցան երեխաների վրա. իրար հետ խոսք կապեցին գնալ ու իրանց հորը հարցնել այս բանը: Առաջ մեծ որդին ներս մտավ հոր մոտ ու հարցրեց. նա փոխանակ պատասխանելու մի լավ ապտակ տվեց. սա օ՛Ֆ անելով դուրս փախավ: Հետո միջնեկը ներս մտավ ու հոր ապտակը ստանալով ետ դարձավ: Վերջի-վերջո պստիկ եղբայրը ներս մտավ. սրան մի ապտակ տվեց, նա մյուս երեսը դարձրեց:

Այն ժամանակ հայրը ասեց.— էլի թե իմ դարդին դարմանանես՝ դու կանես, ես քեզ կասեմ ամեն բան:

Վերցրեց իրեք թերթ թուղթ ու ամեն մեկի վրա այնպիսի մեծությամբ նուռ նկարեց, որ դժվար թե կարելի էր ձեռք բերել աշխարհիս երեսին: Տվեց նրանց ասելով.

— Գնացեք ու ձեզանից մեկը թող այնպիսի նուռ բերի, այն ժամանակ կասեմ ձեր մոր տեղը:

Երեք եղբայրը ճանապարհի համար փող վեր կալան, նստեցին իրանց ձիաները ու ճանապարհ ընկան: Գնացին, գնացին, շատն ու քիչը աստված գիտի, մի մեծ քարի ռաստ էկան. սրա մոտ ճանապարհը երեք էր բաժանվում. այգ քարի վրա գրած էր, թե այս երեք ճանապարհներից մեկով գնացողը ոչ շուտ, ոչ ուշ կվերադառնա, մյուսով գնացողը՝ հինգ տարվա վրա կդառնա, իսկ մյուսով գնացողը՝ հավիտյան չի դառնա: Այս երեք եղբայրները այստեղ ուզեցին բաժանվել. իրենց մատանիները հանեցին մատներից ու էն քարի տակ դրին, ասելով, թե ով շուտ գա, իր մատանին վերցնի ու գնա: Նրանցից պստիկ եղբայրը էն ճանապարհով գնաց, որով գնացողը էլ ետ չպտի գար, իսկ մյուս երկսով՝ մյուս երկու եղբայրները:

Տեսնենք թե պստիկ եղբայրը ուր գնաց:

Պստիկ եղբայրը գնաց, գնաց՝ մի մեծ տների ռաստ եկավ, որի առջև մի գեղեցիկ ավազան էր շինված: Այս ավազանի մոտ մի նռնենի կար, ինչպես իր հայրը նկարել էր թղթի վրա: Այս տանը մեջ կարծես թե մարդ չէր երևում. նա անջախ դռնով ներս մտավ, նի էլավ ծառը, քաղեց երեք նուռը, մինը կերավ, իսկ երկուսը

մինը խորշնի մի թայը գցեց, մյուսը՝ մյուս. հետո ոտները հանեց ու ավազանի սառը ջրի մեջ գրեց զովացնելու փոքր ինչ, որովհետև դադրած էր:

Այս տունը այն դևի տունն էր, որը թաքավորի ողջ հարստությունը հափշտակել էր, միևնույն ժամանակ նրա կինը, որ այս բուսիս տանն էր:

Դևի կինը նկատեց սորան և ճանաչեց. նա դուրս եկավ պատրզամբը ու ասեց.

— Դու ո՞վ ես, որ համարձակվել ես գալ այստեղ. ղուշն իր թևով, օձն իր պորտով չի կարացել գալ այստեղ, դու ո՞նց ես եկել: Էդ հերիք չէ, դեռ նուր քաղել ես: Էս բուսիս դևը կը գա քեզ ձվիկ-ձվիկ կանի. մեղք ես, գնա՛, թեզ հեռացի այս տեղից, — այս ասելով դնաց նրա դրպանը մի դանակ դրեց, որ էլ նա չէր երևում:

Դևը այս խոսակցության ժամանակ որսից վերադարձավ. նա ասաց կնկանը.

— Ա՛յ կնիկ, էստեղ մարգի հոտ է գալիս:

Նա ասաց, թե իրա ահից այստեղ մարդ կարող է՞ ոտ դնել: Իսկ պստիկ եղբայրը շարունակեց իրա ճանապարհը: Երբ հասավ էն քարի մոտ, վերցրեց իր մատանին, տեսավ իր երկու եղբայրները դեռ չեն վերադարձել, ինքը սկսեց իր ճանապարհը շարունակել: Էն քարից գեռ նոր էր հեռացել, էն մյուս երկու եղբայրներն էլ եկան ու իրար հետ գնացին իրանց ճանապարհը: Այն երկուսը չէին կարողացել մեծ նռներ գտնել, հասարակ, մանր նռներ էին բերում: Նրանք երբ տեսան իրանց պստիկ եղբոր բերած մեծ նուռը, նախանձվեցան ու մտքներում դրին, որ մի կերպով ձեռք գցեն այդ մեծ նռները, վախենալով, որ իրանց հերը թաքավորությունը մեծակ նրան կտա՝ իր քաջության համար ու իրանց կղրկի: Ճանապարհին նրան բռնեցին մի մեծ հորի մեջ գցեցին ու նրա բերած մեծ նռները վեր կալան, տարան իրանց հորը տվեցին: Բայց թաքավորը մի իմաստուն թռչուն ունեց. նա թաքավորի ականջին առաջուց ամեն բան ասել էր: Թաքավորը հարցրեց, թե որտե՞ղ է իրանց պստիկ եղբայրը: Նրանք ասացին, թե չգիտեն, մի մեծ քար կար ճանապարհին, նրա մոտից միմյանցից բաժանվել են և զանազան ճանապարհներով գնացել: Թաքավորը սրանց երկուսին էլ ձիանոց պոչից կապեց և քաշ տալով գետնի վրայով մեռցնել տը-

վեց, իսկ պատիկ եղբոր մոտ մարդ ուղարկեց և հանել տվեց հորից։
Նա մանրամասն կերպով պատմեց իր գլխով անցածը։

Այն ժամանակ ասաց թաքավորը.— Դու որ կարացիր բերել
իմ ուզած նուռը, ուրեմն կարող ես և քո մորը բերել և իմ բուր,
ունեցածը, որ դեռ տարել է։

Նա ասաց.— Ծն կարող եմ, միայն ինձ համար շինել տուր մի
ալմաստ թուր, մի այնպիսի մեծ դարաբինա, որ քսան զրվանքա
տանի։

Հայրը շինել տվեց ու բերեց որդուն ցույց տալու։ Նա հուպ
տվեց երկու ձեռի մեջ և կոտրեց թուրը. այն ժամանակ տղեն ասաց,
թե այս թուրը զուտ ալմաստից չէ շինած։ Ինքը անձամբ գնաց
ու իր աչքի առաջ շինել տվեց. կոխվ արեց վրեն ու ձին նստեց
գնաց դեի հավարին։ Մայրը որ տեսավ որդուն, շատ ուրախացավ,
խոսք տվեց իմանալ դեի գաղտնիքը, թե նրա ուժը որտեղ
է։ Մայրը նրան թլխամը արեց՝ ավել դառնա ու դրեց տան պու-
ճախը։

Ծրեկոյան դեռ եկավ ասաց.— Մարդու հոտ է գալիս այս-
տեղից։

Նա ասաց.— էստեղ մարդը ի՞նչ է շինում։

Սա կպավ դեի յախեն, թե քո ուժը ախար որտեղ է, որ ամեն-
քը քեզանից վախենում են։ Նա առաջ վախում էր պատմելու,
բայց որ շատ զոռեց՝ ստիպված էր ասել.

— Այն ինչ սարի գլխին մի ուղտ է արածում, նրա փորին մի
դութիկ կա, նրա մեջ իրեք ծիտ, մինը սպիտակ, մինը կարմիր,
մինը կապույտ. սրանք են իմ հոգին, որ նրանց սպանեն՝ էն ժա-
մանակ իմ ուժն էլ կպակասի։ Դրա սպանողը պիտի ունենա ալմա-
ստ թուր ու մի մեծ թափանչա. սարի ներքևը մի հոր փորի ու հորը
ծածկի մեզարով, որ չտենա, իսկ ինքը պիտի այդ հորի մեջ ծած-
կըվի և երեկոյան, երբ նա վերադառնում է սարը, պետք է զարա-
բինով էն փոսից տա ու թրով իսկույն գլուխը կտրի։

Առավոտը լիսացավ, դեռ գնաց որսի։ Նրա կնիկը պատմեց
էս բոլորը իր պատիկ տղին, որ նա էթա սպանելու էն ուղտին։
Գնաց հասավ էն սարը, նրա ներքևը սկսեց փոս փորել։ Էն սարի
մոտիկ եղած քաղաքի բնակիչները երբ դուրս էին գալիս՝ ուղտի
վախից փախչում էին տուն մտնում, որովհետև այդ ժամանակ նա
սարն էր վերադառնում։ Սորան եկան շուտ հաղորդեցին, որ փախ-

չի էստեղից, նա շլսեց, ասելով, որ ինքը հենց նրա համար էլ եկել է: Փոսը փորեց, ինքը մտավ մեջը ու երեսից ծածկեց մեզարով: Ուղտի գալու ժամանակը երբ հասավ, նա իր յարադ-ասպարը հագրեց: Ուղտի գալուն պես նա փոսից ղարաբինով տվեց ու դուրս գալով էստեղից, թրով գլուխը կտրեց: Փորը ճղեց, հանեց էն արկըղիկը ու րաց անելով՝ երկու ծտի գլխները կտրեց, իսկ վերջինը սաղ վեր կալավ, տարավ մոր մոտ:

Դեը որսի էր գնացել. էստեղ իսկույն իմացավ, թե բանը ինչումն է: Հազիվ հազ իրեն քաշ տալով տուն գցեց ու կնկանը ձեն տալով ասաց.

— Դու էս օրը գցեցիր ինձ:

Պատիկ տղան դուրս եկավ ու սպառնաց նրա վրա. նա խընդրեց, որ իր մոտ գա, բան ունի ասելու: Սա ասաց, թե հեռվից ասա: Նա կրկին ասաց, որ ներքև գա իր մոտ, նա գնաց՝ քիչ էր մնացել, որ դեը շնչով նրան իր բերանը քաշի, բայց մայրը այնպիսի թլիսմը արեց, որ նա էլավ հեռու նստեց: Էն ժամանակ դեը սկսեց խնդրել, որ գոնե էն մի ծիտը իրեն տա, որ նրանով ապրի:

Տղան ասաց.— Թե կտաս իմ հոր բոլոր հարստութունը, զորքը և այլն, էն ժամանակ ես էլ քո ծիտը կտամ:

Դեը համաձայնվեց:— Միայն,— ասաց,— ես մի բան կասեմ, թե կարողացար կատարել, էն ժամանակ քեզ կտամ քո հոր հարստութունը: Դեը ասաց.— կարող ես էս քուչի մոտ վայր ընկած Սև-քարը բարձրացնել երկու ձեռով մինչև պորտո:

Նա ասաց.— Կարող եմ,— ու բարձրացրեց պորտից ավելի վերև:

Դեը մնաց զարմացած:

Դեը ասաց.— Գնա՛, մեր պատրհանում մի փոքրիկ արկղ կա, վեր կալ, բեր այստեղ:— Նա գնաց մի ձեռով վեր կալավ, բերեց դեկին տվեց: Նա այնտեղից հանեց փետուրներ ու բաց թողեց, իսկույն սար ու ձոր թնդացին, թմբուկների ձենը ականջ էր խլացնում: Թաքավորի ամբողջ զորքը եկավ ու կանգնեց նրա որդու առջև, կառքերով ևս: Մայր ու որդի նստեցին կառքը, էն ծտի վիզն էլ կտրեցին՝ իսկույն մեռավ դեը: Իրանք գնացին վեր առնելով բոլոր հարստութունը:

Թաքավորը հեռվից դուրսից տեսավ մտիկ արեց, տեսավ, որ իր որդին մոր հետ նստած կառքի մեջ՝ գալիս են: Նա ծնկաչոք մի

վերստաշափ գնաց նրանց առաջ ու համբուրեց իր քաջ ու հնազանդ
որդու ճակատը:

Մարդ ու կնիկ էլի երկար ժամանակ լավ կյանք անցկացրին:
Նրանք էլ առաջվա նման աղքատ չէին: Սաղ քաղաքը, երբ իմա-
ցավ թաքավորի պատիկ տղի արած ղուաղությունը՝ մնաց զար-
մացած:

